ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Ք. Երևան **« 31 » 03. 2026թ.**

«Ավանդական բժշկության համալսարան» ԱԿ-ն (այսուհետ՝ **Գործընկեր 1**), ի դեմս ռեկտոր **Նորիկ Սարիբեկյանի**, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ»** ՍՊԸ-ն (այսուհետ՝ **Գործընկեր 2**), ի դեմս տնօրեն **Նիկողոս Գասպարյանի,** ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.1. Սույն հուշագրով Կողմերը պարտավորվում են իրականացնել լայնածավալ համագործակցություն՝ միջին և բարձրագույն մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացման նպատակով:

1.2. Գործակցությունն իրականացվում է ուսումնամեթոդական աշխատանքների, մասնագետների փոխայցելության, կրթության որակի ապահովման առաջավոր փորձի փոխանակման, բենչմարքինգի, նորարարական ծրագրերի ներդրման և հետազոտական աշխատանքների ուղղություններով:

2. ԿՐԹԱԿԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

2.1. Կողմերը համագործակցում են քոլեջի շրջանավարտների կրթական հետագծի շարունակականության ապահովման նպատակով:

2.2. Գործընկեր 1-ը պատրաստակամություն է հայտնում ապահովել Գործընկեր 2-ի բարձր և գերազանց առաջադիմություն ունեցող շրջանավարտների ուսումնառության շարունակությունը Համալսարանում՝ ՀՀ օրենսդրությամբ և բուհի ներքին կանոնակարգերով սահմանված ընդունելության կարգերին համապատասխան:

2.3. Գործընկեր 2-ը պարտավորվում է խրախուսել լավագույն առաջադիմություն ունեցող ուսանողների մասնագիտական աճը և ուղղորդել նրանց՝ շարունակելու ուսումը Համալսարանի համապատասխան կրթական ծրագրերում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. «**Գործընկեր 1»-ը պարտավոր է.**

3.1.1. Սովորողներին (պոտենցիալ դիմորդներին) ներկայացնել Համալսարանի կրթական առանձնահատկությունները, առավելությունները և մասնագիտությունները:

3.1.2. Աջակցել համատեղ միջոցառումների, թեմատիկ սեմինարների, վարպետության դասերի և մանկավարժական քննարկումների անցկացմանը:

3.1.3. Ապահովել սույն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

3.2. «**Գործընկեր 2**»-ը պարտավոր է.

3.2.1. Կազմակերպել ուսումնամեթոդական քննարկումներ, մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, իրականացնել լրացուցիչ կրթական ծրագրեր:

3.2.2. Ապահովել սույն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

3.3. **Կողմերն իրավունք ունեն.**

- Փոխադարձ այցելությունների միջոցով տեղեկանալ սույն հուշագրով նախատեսված գործառույթների կատարման արդյունավետության մասին:

4. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից:

4.2. Հուշագիրը գործում է **5 (հինգ) տարի** ժամկետով

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր լրացուցիչ համաձայնագիր կազմելու միջոցով:

5.2. Սույն Հուշագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ մեկական յուրաքանչյուր կողմի համար:

6. ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Գործընկեր 1»	«Գործընկեր 2»
«Ավանդական բժշկության համալսարան» ԱԿ	«Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ
Ք. Երևան, Մարշալ Բաբաջանյան 38	ք.Վարդենիս, Վ.Համբարձումյան 19
Հեռ:+ 374 (10) 616 290	Հեռ: +374 77 261201
Էլ. փոստ: info@utm.am	Էլ. փոստ: medhumcollege@gmail.com
_____ Ն. Սարիբեկյան	_____ Ն. Գասպարյան